ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2012թ. մայիսի 30 նիստի

Գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր գիտխորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ գիտական խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո գիտխորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը:

Օրակարգ

1. 2011-2012 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ Խաչիկյան):
2. 2011-2012 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին (զեկ.՝ պետական պետական քննական հանձնաժողովների նախագահներ):
3. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Այվազյան):
4. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
5. 2011-12 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անանուն սոցհարցումների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):
6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին :
7. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2011-2012 ուս. տարվա շրջանավարտներին ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:
8. Ընթացիկ հարցեր :

1. ԼՍԵՑԻՆ. 2011-2012 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին (դեկանի տեղակալ, ի. գ. դ. Հ Խաչիկյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկանի տեղակալ Հ. Խաչիկյանը ներկայացրեց 2011-2012 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ըստ այդմ՝ պաշտպանության է ներկայացվել 67 մագիստրոսական թեզեր : Ավարտական աշխատանքներ է ներկայացրել և պետական քննություններ հանձնել 134 ուսանող:

Մագիստրոսական թեզերիի և ավարտական աշխատանքների պաշտպանությունից ու պետական քննություններից ուսանողների ստացած գնահատականներն ունեն հետևյալ պատկերը.

Բակալավրիատում քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 19 ուսանող ստացել է գերազանց, 6 ուսանող՝ լավ և գերազանց, 9 ուսանող՝ լավ, 5 ուսանող՝ լավ և բավարար գնահատականներ : Մագիստրատուրայում քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ 15 ուսանող ստացել է գերազանց, մեկ ուսանող՝ լավ գնահատականներ: Գործարարական մասնագիտացմամբ 8 ուսանող ստացել է գերազանց, մեկ ուսանող՝ լավ գնահատականներ:

Բակալավրիատում սահմանադրաիրավական մասնագիտացմամբ 4 ուսանող ստացել է գերազանց, 2 ուսանող՝ գերազանց և լավ, 6 ուսանող՝ լավ, 7 ուսանող՝ լավ և բավարար, 3 ուսանող՝ բավարար գնահատականներ, իսկ մեկ ուսանող չի ներկայացել քննությանը : Մագիստրատուրայում սամանադրաիրավական մասնագիտացմամբ 3 ուսանող ստացել է գերազանց, 8 ուսանող՝ լավ գնահատականներ:

Բակալավրիատում քրեաիրավական մասնագիտացմամբ 11 ուսանող ստացել է գերազանց, 6 ուսանող՝ գերազանց և լավ, 18 ուսանող՝ լավ, 6 ուսանող՝ լավ և բավարար, 5

ուսանող՝ բավարար գնահատականներ, իսկ մեկ ուսանող չի ներկայացել քննությանը : Մագիստրատուրայում քրեահրավական մասնագիտացմամբ 12 ուսանող ստացել է գերազանց, 2 ուսանող՝ լավ գնահատականներ :

Բակալավրիատում միջազգային իրավական մասնագիտացմամբ 4 ուսանող ստացել է գերազանց, 2 ուսանող՝ գերազանց և լավ, 4 ուսանող՝ լավ, 10 ուսանող՝ լավ և բավարար, 6 ուսանող՝ բավարար, 2 ուսանող՝ անբավարար գնահատականներ, իսկ մեկ ուսանող չի ներկայացել քննությանը: Մագիստրատուրայում միջազգային իրավական մասնագիտացմամբ 5 ուսանող ստացել է գերազանց, 2 ուսանող՝ լավ գնահատականներ : Եվրոպական իրավունք մասնագիտացմամբ 4 ուսանող ստացել է գերազանց, 1 ուսանող՝ լավ, 6 ուսանող՝ բավարար գնահատականներ :

Հ. Խաչիկյանը ներկայացրեց նաև հեռակա ուսուցմամբ բաժնում պետական քննությունների և ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքները, որոնք ունեն հետևյալ պատկերը.

Առաջին մասնագիտությաբ հեռակա ուսուցմամբ 35 ուսանողներից 2-ը ստացել են գերազանց գնահատական, 2 ուսանող՝ լավ և գերազանց, 6 ուսանող՝ լավ և բավարար, 12 ուսանող՝ բավարար, 11 ուսանող՝ անբավարար, 2 ուսանող չի ներկայացել քննությանը:

Հեռակա ուսուցմամբ 2-րդ մասնագիտությամբ 32 ուսանողից 2-ը ստացել է գերազանց գնահատական, 10 ուսանող՝ լավ և գերազանց, 6 ուսանող՝ լավ և բավարար, 6 ուսանող՝ բավարար, 5 ուսանող՝ անբավարար գնահատականներ, 3 ուսանող քննությանը չի ներկայացել:

ՈՐՈՇԵՑԻՆ. 2011-2012 ուսումնական տարվա պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին դեկանի տեղակալի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. 2011-2012 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների մասին (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հանձնաժողովների նախագահները հաշվետվություն ներկայացրեցին 2011-2012 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտացումների գծով բակալավրիատի և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև խորհրդի անդամների հետ քննարկեցին քննական գործընթացի հետ կապված իրենց տպավորություններն ու առաջարկությունները:

Ըստ այդմ, բարձր գնահատվեց դեկանատի աշխատանքը՝ պետական քննությունների անցկացումը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար : Մասնավորապես նշվեց, որ հանձնաժողովի անդամներին ժամանակին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն՝ քննությունների օրերի, ժամերի, հարցաշարերի և քննության անցկացման հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկատվություն : Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց որևէ շեղման :

Դրական համարվեց այն, որ նախորդ տարվա համեմատ այս տարի էլ ավելի է բարձրացել ուսանողների պատրաստվածության մակարդակը, նրանց պատասխանների և բանավոր խոսքի արտահայտման որակը, կատարվել են ավելի արդիական թեմաներով գիտահետազոտական աշխատանքներ, գրեթե կատարյալ մակարդակի վրա են գտնվել աշխատանքների վերաբերյալ ընդդիմախոսների գրախոսականները, թե ծավալների, թե բովանդակության և սուր դիտողությունների առումով՝ իրապես արտացոլելով աշխատանքի առավելություններն ու թերությունները:

Այնուամենայնիվ, պետական քննական հանձնաժողովների նախագահների զեկույցներում տեղ են գտել նաև դիտողություններ ու առաջարկություններ, որոնք ուղղված են կրթական գործընթացների որակի հետագա բարելավմանը և դրանով իսկ որակյալ կադրերի պատրաստմանը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Վ. Քոչարյանը, Ա. Վաղարշյանը, Տ. Բարսեղյանը, Ս. Մեղրյանը, Ռ. Եղյանը, Ս. Դիլբանդյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով 2011-2012 ուսումնական տարվա պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, հաշվի առնելով դրանցում տրված դրական գնահատականները՝ նախորդ տարվա համեմատ ուսանողների ավելի բարձր պատրաստվածության, նրանց պատասխանների և բանավոր խոսքի արտահայտման որակի բարձրացման, ավելի արդիական թեմաներով գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, որակյալ գրախոսականների առկայության և դեկանատի պատշաճ աշխատանքների վերաբերյալ, միաժամանակ նկատի ունենալով պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում արված դիտողություններն ու առաջարկությունները՝ 2011-2012 ուսումնական տարվա պետական քննություններում տեղ գտած որոշ թերությունների վերաբերյալ և կարևորելով դրանք հետագայում բացառելու, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետում կրթության որակը բարելավելու անհրաժեշտությունը, **ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.**

Հանձնարարել՝ ֆակուլտետի ամբիոններին՝

ա/ Վերանայել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների առաջարկվող թեմաները՝ առավելագույնս ապահովելով արդիականություն, պրակտիկ ուղղվածություն և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող թեմաների ընտրությունը:

բ/ Հետևողական լինել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պատրաստման ժամանակ օգտագործվող գրականության ծավալների, թարմության և որակի նկատմամբ, դրանցում ներառել ոչ միայն և բացառապես ռուսալեզու, այլ նաև այլ օտարալեզու աղբյուրներ:

գ/ Հատուկ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ինքնուրույնության աստիճանին, գիտականության մակարդակին, ապահովել դրանցում թեմային առնչվող արդիական հարցերի լուսաբանումը, ինչպես նաև հետևողական աշխատանք տանել ուսանողների հետ՝ այլ հեղինակների աշխատություններից օգտվելու, դրանցից մեջբերումներ, հղումներ կատարելու, նրանց մտքերն ու գաղափարներն օգտագործելու կանոնների վերաբերյալ, ապահովելով ոչ միայն աշխատանքի ինքնատիպությունը, այլև բացառել ուղղակի արտագրությունները, մտագողությունը և հեղինակային իրավունքների հնարավոր այլ խախտումներ :

դ/ Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ապահովել դրանցում նաև պրակտիկ նյութերի օգտագործումը: Միաժամանակ, նպաստել պրակտիկ նյութերին տեղում ծանոթանալու ուսանողների համար հնարավորության ստեղծմանը:

ե/ Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմայի առանձնահատկությունից ելնելով՝ ապահովել ուսանողների կողմից ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի, Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական և ՀՀ վճռաբեկ դատարանների որոշումների ուսումասիրությունն ու վերլուծությունը:

զ/ Մշակել և սեղմ ժամկետներում հրատարակել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդական ցուցումներ և դրանց համապատասխան ողջ տարվա ընթացքում հետևողական աշխատանք տանել մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ պատրաստող ուսանողների հետ՝ ապահովելով աշխատանքների որակը և դրանց պատշաճ ներկայացումն ու հրապարակային պաշտպանությունը:

3. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն. Այվազյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ռ. Եղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել դրական:

4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին (ՈՒԳԸ նախագահ՝ Տ. Նաղդալյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՈՒԳԸ կատարած աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ՈՒԳԸ կատարած աշխատանքը գնահատել դրական:

5. ԼՍԵՑԻՆ. 2011-12 ուսումնական տարվա առաջին կիսամյակի անանուն սոցհարցումների արդյունքների ամփոփման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչներ):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Զեկուցողները ներկայացրեցին, որ ուսանողների շրջանում անցկացված հերթական անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, հատուկ ուշադրություն է դարձվել հարցման թերթիկի այն հարցերի վրա, որոնցից ամբիոնի դասախոսները համեմատաբար ցածր գնահատականներ են ստացել: Նշվեց նաև, որ անընդհատ կատարելագործման կարիք են զգում նաև հարցաթերթիկում ընդգրկված հարցերը՝ դրանք ուսանողի համար ավելի պարզ և մատչելի դարձնելու նպատակով: Ըստ զեկուցողների՝ անհրաժեշտ է նաև վերանայել հարցման մասնակիցների շրջանակը՝ դրա համար ընտրելով որոշակի օբյեկտիվ չափանիշներ: Բացի այդ, գնահատման գործընթացում սուբյեկտիվ գործոնի դերը նվազեցնելու նպատակով առաջարկվեց հարցումներն անցկացնել համապատասխան դասընթացի ավարտից անմիջապես հետո՝ մինչև քննաշրջանի սկսվելը, իսկ արդյունքները հրապարակել քննաշրջանի ավարտից հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ ուսանողների շրջանում անցկացված անանուն սոցիոլոգիական հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն,

բ/ հանձնարարել ամբիոններին մշտապես ուշադրության կենտրոնում պահել հարցացանկի այն կետերը, որոնց վերաբերյալ ամբիոնի և առանձին դասախոսների միջին գնահատականը ցածր է:

6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին:

6.1. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առկա ասպիրանտ Արմեն Գրիգորյանի ատեստավորման մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Արմեն Գրիգորյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.2. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Արման Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Արման Հովհաննիսյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.3. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Անդրանիկ Մնացականյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Անդրանիկ Մնացականյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.4. ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Անդրանիկ Մանուկյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Անդրանիկ Մանուկյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.5. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Տիգրան Մարկոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Տիգրան Մարկոսյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.6. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Պավել Թադևոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը. Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Պավել Թադևոսյանի հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.7. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Սայադ Բաղալյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Վ. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Սայադ Բաղալյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.8. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացֆիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Արսեն Թավադյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Արսեն Թավադյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.9. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացֆիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Սիմոն Ֆարմանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՇԵՑԻՆ.

ա/ Հաշվի առնելով, որ Սիմոն Ֆարմանյանը հաշվետու տարում ձեռք է անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2011-2012 ուս. տարվա շրջանավարտներին ասպիրանտուրայի ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Գիտխորհրդի քարտուղարը հայտնեց, որ ԵՊՀ 2011-2012 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորություն տալու խնդրանքով ֆակուլտետի գիտական խորհրդին են դիմել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2011-2012 ուս. տարվա հետևյալ շրջանավարտները.

1. Մկրտչյան Միեր,
2. Գրիգորյան Վահագն,
3. Սարգսյան Հայկ,
4. Գրիգորյան Տիգրան,

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Իսկոյանը:

ՈՐՈՇԵՑԻՑԻՆ. Հաշվի առնելով վերոհիշյալ մագիստրոսների բարձր առաջադիմությունը և ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

8.1. **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Արցախի պետական համալսարանի ասպիրանտ Լիլիթ Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Լիլիթ Թադևոսյանի «Գործարքի ձևը և այն չպահպանելու հետևանքները», բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը ԺԲ. 00.03 - «Քաղաքացիական իրավունք, առևտրային (կոմերցիոն) իրավունք, միջազգային մասնավոր իրավունք, ընտանեկան իրավունք, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Լիլիթ Թադևոսյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.թ, դոցենտ Ս. Մեղրյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

8.2. **ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Սահակ Մանուկյանի «Համայնքային ծառայության համակարգում պաշտոններ զբաղեցնելու հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությանը համապատասխանելու և այն հաստատելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ռ. Եղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով, որ Սահակ Մանուկյանի «Համայնքային ծառայության համակարգում պաշտոններ զբաղեցնելու հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման համապատասխանում է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությանը, հաստատել այն,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.3. **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-Ռուսական /Սլավոնական/ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ Սյուզաննա Ավետիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Մեղրյանը, Գ. Պետրոսյանը, Տ. Բարսեղյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Սյուզաննա Ավետիսյանի «Բժշկական ապահովագրության իրավական հիմնախնդիրները», բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը ԺԲ. 00.03 - «Քաղաքացիական իրավունք, առևտրային (կոմերցիոն) իրավունք, միջազգային մասնավոր իրավունք, ընտանեկան իրավունք, աշխատանքային իրավունք, սոցիալական ապահովության իրավունք»,

բ/ Սյուզաննա Ավետիսյա գիտական ղեկավար նշանակել ի.գ.դ, պրոֆեսոր Տ. Բարսեղյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

8.4.**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ գիտական ընկերության կողմից հրատարակվող ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուում իրավագիտության ֆակուլտետի ուսանողների գիտական հոդվածները տպագրության երաշխավորելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Կ Գևորգյանը, Վ. Քոչարյանը, Ա. Ղազինյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով, որ երաշխավորության համար ներկայացված հոդվածներն ունեն ոչ միայն տեսական, այլև պրակտիկ կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*